

գիւերային ժամուց՝ Լուսնթագի մէջ բնակող արարածները՝ արեւուն ծագելէն առաջ՝ փոքրիկ սպիտակ աստղ մը կը տեսնեն. — գերկիր. — և հագիւ նորա էութիւնը կրնան գիտել :

Յիրուսի, ինչպէս ըսինք, պանրի որպէրը չեն տեսներ ոչ փիղերը, կէտ ձրկները և ոչ երկրիս ամէն տեսակ կենդանիները . բայց մարդ որ աչքերը յերկինս կը բարձրացունէ և կը չափէ, կը թուէ աստղերը՝ արդեօք նա ալ որդերուն պէս պիտի մոռժէ : Ի՞նչ պատճառաւ միւս աշխարհներն ալ տարբեր տեսակ արարածներով բնակեալ պիտի չըլլան. ո՞րչափ զանազանութիւն կայ նոյն իսկ մարդկային ցեղին մէջ. սեւէն 'ի պղնձագոյնն, յարաբէն 'ի չինացին, յաւորայիացիէն 'ի բաղակոնն, յամերիկացիէն 'ի կովկասեանն . . . նոյն իսկ Եւրոպայի մէջ ո՞րչափ տարբերութիւն կայ անգղիացւոյն և իտալացւոյն, գաղղիացւոյն և ռուսին մէջ. և նոյն իսկ մէկ ազգի մը մէջ ալ հանճարաւոր մարդոյ և յիմարի մը մէջ ո՞րչափ զանազանութիւն :

Բազմաթիւ բնակելի աշխարհաց գաղափարը՝ անցեալ դարը ծնաւ, իսկ մոլորակաց հաւատի բնակելի ըլլալը՝ ներկայ դարու ջանից և աստղաբաշխական հետազոտութեանց արգասիքն եղաւ :

Յ\*\*

## ԱՅՈՒ ԵՒ ԱՅԼԲ

Եմիւ Լափրիչ — Այս նշանաւոր պելճիացի անտեսագետն մեռաւ 'ի Տոյսըն գոգեկին մէջ Յունուարի 2ին : Բազմաթիւ ուսումնական հաստատութեանց անդամ, 'ի Թագաւորէն պարոնի տիւրդոսով հռչակեալ՝ Լալլըէյ Լիէժի Համալսարանին մէջ ուսուցիչ էր : Երեսաց մեծ մասը ճանապարհորդութեամբ անցընելով՝ ամէն երկրաց անտեսական և ընկերական վիճակը մօտէն քննեց : Գրագէտ էր միանգամայն և Թարգմանեց 'ի Գաղղիերէն՝ Նիպելունկները . բայց մասնաւորապէս անտեսական և ընկերախօսական խնդրովք զբաղեցաւ . գաղափարով չափաւորապէս ազատամիտ՝ ամէն յառաջագիմութեան և բարեկարգութեան պաշտպան եղաւ իւր ազգու գրչով . այլ և այլ լրագրաց մէջ բազմաթիւ յօդուածներ հրատարակած է, ինչպէս նաեւ ստուար թիւ մը գրուց և տեսարակներու :

Յոռնական արձան մը — Վերջերս Լոսլրի Թանգարանը իտալացի հնածախէ մը, Ժիլի Սամպոնի, պղնձէ արձանիկ մը գնեց, որ Բապոլ կը ներկայացնէ :

այս արձանը յԱկրոպոլիս Աթէնքի զանուեր է և Կրետէի կուսակալ Ֆրթիա-  
պէս փաշայինն էր երբեմն . նշանաւոր հնազդեանէր և արուեստագէտներ , ինչ-  
պէս Ռայնաք և Միլանի այս արձանը Պրաքսիտելի կ'ընծայեն . և նախ և  
սուաջ լիսն զի ամենանմիշդ նման է յոյն երեսելի արձանագործին մեկ աշխա-  
տութեան՝ զոր Կալիստրատոս մեզի մանրամասն նկարագրեր է . երկրորդ՝ Սար-  
դիօ կոմսին 1840ին յԱթէնս գնած հողէ հին արձանիկ մը՝ Լուրի նոր  
ստացած այդ Բաքոսին ճիշդ օրինակն է :

Դարադարձ Մոզարի մահուան . — 1791 զեկտ . 5ին 36 տարուան  
հասակին մէջ՝ յետ կարճատե հիւանդութեան կը մեռնէր հոչակաւոր երգա-  
հանն Մոզար , որ 'ի Սալցբուրկ ծներ էր 1756ին : Դեկտեմբերի 5ին 'ի  
Գերմանիա և յԱւստրիա մեծահանդէս տօնեցին իւր մահուան դարապարձը .  
այս աշխարհաքարոզ վարժապետը զարմանալի մանկութիւնը անցունելէն վեր-  
ջը՝ ընծայեց գեղ արուեստից աշխարհին՝ հետեւեալ գործերը . Տոն Ճիոպան-  
նի , Ֆիկարոյի խարսանիքը , Մոզական սրինգը , և Հանգստեան Պատարա-  
գը . ունի նաև ուրիշ երկրորդական գրուածներ , ինչպէս Միհրդատ , Տիտոսի  
Գրոշիանը ևայլն :

Ի Տաճկաստան հրատարակեալ գրքեր : — Իտալական լրագիր մը կ'ըսէ  
որ անցեալ տարի 'ի Տաճկաստան 940 գիրք հրատարակուեցաւ . 427 տաճ-  
կերէն , 146 յունարէն , 120 հայերէն , 29 քաղղիերէն , 15 իտալերէն ,  
15 պարսկերէն , 6 սպանեօլերէն , 11 պուկարերէն , 2 անգղիերէն , 2  
գերմաներէն : Տաճկական գրոց մէջէն 145ը վիպասանութիւն են . յունարէն  
գրոց մեծամասնութիւնն՝ վիպասանութիւն , իսկ հայերէնները՝ կրօնական  
խնդրոց վրայ կը խօսին :

Թատրոնի մը կործանումն . — Ի Սլոբոհոյ միջաւորական թատրոնը քիչ  
ատենէն պիտի կործանեն . այս թատրոնը Եւրոպայի մէջ հիներէն մին է ,  
վասն զի 1772ին շինուեցաւ և բնաւ հրդեհեցաւ : Այս թատրոնին սրահ-  
ներէն միոյն մէջ՝ ներկայացման մը ժամանակ դաւաճանն Անքարովթէօմ  
սպաննեց զկիւղապլ Գ :